

## **Գաղտնիության քաղաքականություն**

Սույն գաղտնիության քաղաքականությունը մշակվել է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ կողմից (գրանցման համար՝ 264.110.01743 , ՀՎՀՀ 00009253, գտնվելու վայրը՝ ք. Երևան, Դավիթ Մայրան 43), այսուհետ՝ «Ընկերություն», և նախատեսված է այն անձանց համար, ովքեր հետաքրքրված են editprint.am կայքում Ընկերության կողմից իրենց անձնական տվյալների օգտագործմամբ: Կայքի բովանդակությունն ու սույն գաղտնիության քաղաքականությունը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ: Կայքում օգտագործվող բոլոր տերմիններն ունեն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իմաստը:

Համաձայն օրենքի անձնական տվյալ է համարվում որևէ ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը:

«Տվյալ», «Տեղեկություն» տերմինները կայքում օգտագործվում են հավասարազոր նշանակությամբ:

Ընկերության Կայքում Ձեր անձնական տվյալների օգտագործման, պաշտպանության և այլ կերպ պահպանման մեթոդներին ծանոթանալու համար խնդրում ենք ուշադիր ծանոթանալ Ընկերության գաղտնիության քաղաքականությանը:

Սույն գաղտնիության քաղաքականության պայմանների ընդունման վանդակում նշում անելը նշանակում է համաձայնություն տալ սույն քաղաքականությամբ նախատեսված նպատակներով Ձեր անձնական տվյալների լրացմանը:

## **Ինչպե՞ս ենք մենք տեղեկություններ հավաքագրում:**

Ընկերությունը տեղեկություններ հավաքագրում է հետևյալ միջոցներով.

- editprint.am կայքում գրանցվելիս,
- editprint.am կայքից գնումներ կատարելիս,
- editprint.am կայքում նորություններին բաժանորդագրվելիս,
- editprint.am կայքի «Հետադարձ կապ» ձևանմուշը լրացնելիս,

- editprint.am կայք այցելելիս (այս դեպքում տեղեկատվությունը պահպանվում է «Cookies» բաժնում):

Այս տարբերակներով ստացված տեղեկատվությունը համարվում է անձնական տվյալներ: Կատարալով վերնոշյալ գործողությունները Դուք համաձայնվում եք, որ մենք կարող ենք դրանք մշակել ու օգտագործել Ձեզ որևէ ծառայություն մատուցելու համար:

### **Ինչպիսի՞ անձնական տեղեկատվություն ենք մենք հավաքագրում:**

Մենք հավաքագրում ենք «Cookies» բաժնում պահվող, IP հասցեներից ստացվող, գրանցման կամ հայտերը լրացնելիս Ձեր նշած տեղեկատվությունը, որն հասանելի է դառնում կայքում Ձեր գրանցվելու պահից, նորություններին բաժանորդագրվելիս, պատվերներ կատարելիս: IP հասցեներից տվյալների ստացումն ու Cookies» բաժնում դրանց պահպանումը սկսվում է ինքնաշխատ՝ կայք այցելելիս:

Դուք կարող եք դադարեցնել բաժանորդագրությունը նորությունների վերջում տեղադրված «Դադարեցնել բաժանորդագրությունը» հղումով:

### **Ինչպե՞ս ենք մենք օգտագործում Ձեր տվյալները:**

Կայքում գրանցվելուց, նորություններին բաժանորդագրվելուց, «Հետադարձ կապ» ձևանմուշը լրացնելիս, Հայտեր լրացնելիս կամ կայքի որևէ այլ ծառայությունից օգտվելիս հավաքագրված տվյալները մենք կարող ենք օգտագործել հետևյալ նպատակներով:

- Ընկերության գործունեության շրջանակներում Ձեզ ծառայություն առաջարկելու կամ մատուցելու համար,
- Կայքում առաջարկված ծառայությունները մատուցելու համար,
- Ավելի հարմարավետ ու որակյալ ծառայություններ մատուցելու նպատակով կայքի բարելավման համար,
- Ձեր կատարած պատվերները մշակելու համար,
- Կայքում Ձեզ համապատասխան ապրանքների առաջարկման համար,
- Հաճախորդների պահանջներին համապատասխանող սպասարկման որակի ապահովման համար,

- Թիրախավորված գովազդ տեղադրելու համար,
- Ներդրողների համար նախատեսված նորություններ պարունակող էլեկտրոնային նամակների ուղարկման համար,
- Ձեզ հետ կապ հաստատելու խնդրանքին արձագանքելու համար:

### **Ինչպե՞ս ենք մենք պաշտպանում Ձեր տվյալները:**

Ձեր անձնական տվյալները պահվում են Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում գործող ISO/IEC 27001:2013 հավաստագրված տվյալների կենտրոնում: Տվյալների փոխանցումն իրականացվում է secure socket layer (SSL) տեխնոլոգիայով:

Ձեր անձնական տվյալները գտնվում են պաշտպանված ցանցերում և հասանելի են միայն սահմանափակ թվով մարդկանց, ովքեր նշված համակարգերի հասանելիության հատուկ իրավունքներ ունեն և պարտավոր են պահպանել նշված տեղեկությունների գաղտնիությունը:

Մենք օգտագործում ենք «Cookie»-ները

- Հետագա այցելությունների նպատակով օգտագործողների նախընտրությունները հասկանալու և հիշելու համար
- Գովազդին հետևելու համար
- Կայքի գործածության և այցելությունների քանակի վերաբերյալ տվյալների ամբողջացման նպատակով՝ հետագայում կայքի որակի բարելավման և նոր գործիքների մշակման համար:

Մենք ձեռնարկում ենք տվյալների անվտանգության ապահովման համար անհրաժեշտ բոլոր տեխնիկական և կազմակերպչական միջոցները, կիրառում համապատասխան միջոցներ Ձեր տվյալները անօրինական միջամտությունից պաշտպանելու համար: Այսուհանդերձ, ընդունեք, որ չնայած մեր ձեռնարկած ու օրենքով սահմանված մեր պարտականությունների կատարմանը, անօրինական միջամտությունն ամբողջովին բացառել հնարավոր չէ:

### **Տեղեկությունների տրամադրումը երրորդ անձանց**

Մենք չենք վաճառում կամ այլ կերպ փոխանցում Ձեր անձնական տվյալները երրորդ անձանց՝ առանց այդ մասին Ձեզ նախապես տեղեկացնելու: Կայքի աշխատանքներն իրականացնող մեր

գործընկերները և այլ անձինք, ովքեր աջակցում են մեզ կայքի շահագործման, գործունեության իրականացման, օգտագործողների սպասարկման հարցում, երրորդ կողմ չեն համարվում՝ պայմանով, որ նշված անձինք պարտավորվում են պահպանել այդ տվյալների գաղտնիությունը: Մենք կարող ենք նաև հրապարակել տեղեկությունները օրենսդրությամբ սահմանված դեպքերում, կայքի քաղաքականությունների կիրառման, մեր կամ այլ անձանց իրավունքների, գույքի կամ անվտանգության պահպանման նկատառումներից ելնելով:

Այնուամենայնիվ, հաճախորդի վերաբերյալ ոչ անձնական տեղեկությունները կարող են տրամադրվել այլ անձանց մարքեթինգի, գովազդի կամ այլ նպատակներով:

Երրորդ կողմի հղումներ

- Ընկերությունը պատասխանատվություն չի կրում այլ կազմակերպությունների կողմից կայքում տեղադրվող գովազդի բովանդակության համար:

### **Ընկերությունը պարտավորվում է.**

- Չօգտագործել կեղծ կամ ապակողմնորոշիչ վերնագրեր կամ էլեկտրոնային հասցեներ:
- Գովազդ հանդիսացող հաղորդագրությունները ողջամիտ կերպով որակել, նշել որպես գովազդ:
- Անմիջապես արձագանքել բաժանորդագրության դադարեցման դիմումներին:
- Բաժանորդին հնարավորություն տալ հրաժարվել բաժանորդագրությունից՝ յուրաքանչյուր նամակի վերջում համապատասխան հղում տրամադրելով:

### **Փոփոխություններ գաղտնիության քաղաքականության մեջ**

Ընկերությունը պարբերաբար կարող է վերանայել և վերամշակել գաղտնիության քաղաքականությունը՝ բոլոր թարմացումները տեղադրելով կայքում:

Գաղտնիության քաղաքականության, Ձեր անձնական տվյալների պահպանության, Ձեր պաշտպանության իրավունքի հետ կապված հարցերով կարող եք կապ հաստատել հետադարձ կապի միջոցներով:

Սույն գաղտնիության քաղաքականությանը համաձայնություն տալու վանդակում նշում անելով Դուք հաստատում եք, որ ընթերցել, հասկացել եք և համաձայնություն եք տալիս վերոշարադրյալ գաղտնիության քաղաքականությանը, այդ թվում՝ սույն քաղաքականությամբ նշված ձեր անձնական տվյալների պահպանման ու օգտագործման քաղաքականությանը:

Ընկերությունն իրավունք ունի ցանկացած պահի իր հայեցողությամբ ու ցանկացած պատճառով փոփոխել գաղտնիության քաղաքականությունը՝ առանց Ձեզ նախապես տեղեկացնելու: Նոր փոփոխությունները Ձեր նկատմամբ կիրառելի կլինեն, եթե Դուք տվել եք Ձեր համաձայնությունը նոր պայմաններով (փոփոխություններով) տվյալների մշակման համար:

## **Ձեր իրավունքները**

- Դուք ունեք «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավունքներ:
- Դուք իրավունք ունեք հետ կանչել անձնական տվյալները մշակելու մասին Ձեր համաձայնությունը կամ պահանջել ջնջել Ձեր անձնական տվյալները: Սակայն այդ պարագայում, ցավոք, մենք չենք կարող շարունակել Ձեզ մատուցել Ծառայություններ կամ շարունակել ձեզ հետ առկա այլ պայմանագրային հարաբերությունները: Բացի այդ, նշենք, որ անձնական տվյալների ջնջումը իրավական պահանջների, այլ պարտականությունների և գործոնների պատճառով միշտ չէ, որ հնարավոր է:
- Դուք կարող եք ցանկացած պահի հրաժարվել Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների մասին հետագա գովազդային բնույթի տեղեկատվություն ստանալուց՝ այդ մասին գրավոր կամ Ընկերության կողմից սահմանված այլ ձևով Ձեր կամահայտնությունը հասցնելու միջոցով:
- Դուք իրավունք ունեք դիմել Ընկերությանը՝ Ձեր անձնական տվյալները ուղղելու կամ փոփոխելու համար, եթե դրանք սխալ են կամ պետք է թարմացվեն:

- Դուք իրավունք ունեք բողոք-պահանջ ներկայացնել Ընկերությանը, եթե կարծում եք, որ Ձեր անձնական տվյալները մշակվել են խախտումներով կամ եթե համաձայն չեք Ձեր անձնական տվյալների մշակման կարգի հետ:
- Դուք կարող եք բողոք ներկայացնել տվյալների պաշտպանության լիազոր մարմին:
- ՀՀ-ում տվյալների պաշտպանության լիազոր մարմինն է ՀՀ արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը:

«Էդիթ Պրինտ» ՍՊԸ

Հասցե. Ք. Երևան, Դավիթ Մալյան 43

Հեռ. +374 10 520848, +374 95 520848

Էլ հասցե. [webshop@editprint.am](mailto:webshop@editprint.am)